ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 522

Ա/Ձ ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանի կողմից 05.02.2025-ին հայտարարված « ՀՀ ՏՄԻՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-25/05» ծածկագրով ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող թվով 16 մանկապարտեզներ ՀՈԱԿ-ների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած Ա/Ձ Աննա Խաչատրյանը 2,4,5,6,8,9,13,17 չափաբաժինների համար ճանաչվել է ընտրված մասնակից:

Ա/Ձ Աննա Խաչատրյանին 24.03.2025-ին armeps.am կայքի միջոցով ներկայացվել է «ՀՀ ՏՄԻՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-25/05» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկ: Հարավերով սահմանված ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Ա/Ձ Աննա Խաչատրյանի կողմից չի ներկայացվել հաստատված պայմանագիրը: Ա/Ձ Աննա Խաչատրյանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից: «ՀՀ ՏՄԻՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-25/05» ծածկագրով գնման ընթացակարգի 2,4,5,6,8,9,13,17 չափաբաժինների չկայացած լինելու մասին հայտարարությունը 18.04.2025-ին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով «Գնումների մասին »ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ա/Ձ Աննա Խաչատրյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացնել Ա/Ձ Աննա Խաչատրյանի տվյալները՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

18 ԱՊՐԻԼԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ